# Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«----» -------------- 2018 թվականի N ------ -Լ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՁԱՌՅՈՒԾԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՁԱՌՅՈՒԾԻ ՏԱՐԻ ՀՌՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Կառավարությունը որոշում է.

1. Հռչակել 2019 թվականը կովկասյան ընձառյուծի տարի:
2. Հաստատել կովկասյան ընձառյուծի պահպանության 2019 թվականի պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

Կառավարության 2018 թվականի

---------------- --- -ի N --- -Լ որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՁԱՌՅՈՒԾԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Կատարման ժամկետը | Պատասխանատու մարմինը | Ֆին աղ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ստեղծել միջոցառումները համակարգող հանձնաժողով | Դեկտեմբեր<br><br>2018 թ. | ՀՀ կառավարություն, գիտական, հանրային և միջազգային կազմակերպություններ | Ֆին պա |
| 2. | Հայաստանի կենսաբազմազանության մասին ֆիլմի նկարահանում և ցուցադրություն | 2019թ.<br><br>Մայիս | Բնապահպանության նախարարություն<br><br>Մշակույթի նախարարություն<br><br>Միջազգային կազմակերպություններ<br><br>Ստեղծագործական ընկերություններ | Օրե այլ |
| 3. | Կենսաբազմազանության թեմայով ցուցահանդեսների կազմակերպում | 2019 թվականի ընթացքում | Բնապահպանության նախարարություն<br><br>Մշակույթի նախարարություն | Օրե աղ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Միջազգային կազմակերպություններ | |
| 4. | Կովկասյան ընձառյուծի միջազգային վեհաժողով | 2019 թ. Հոկտեմբեր | Բնապահպանության նախարարություն<br><br>Արտաքին գործերի նախարարություն<br><br>Գիտությունների ազգակին ակադեմիա | Օրե այլ |
| 5. | Կովկասյան ընձառյուծի թեմայով նամականիշերի, բացիկների թողարկում | 2019 թվականի ընթացքում | Բնապահպանության նախարարություն<br><br>Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | Օրե այլ |